Հուսիկ Արա

Հանուն քեզ էր

Սարսուռով եմ արտաբերում քեզ,
ինչպես Աստծու անունը.
ծիրանագույն բառ ես, ազատություն,
այրում ես շուրթերս:

Մեր աչքերի երազները վառեցինք՝ զույգ ջահեր,
քո սպասման երկար գիշերին.
մեր մարմինը մեր ոգու չափ էր
ու մատաղ էր ամեն անգամ քո ծեսին,
մինչևիսկ կենաց ջուրը՝ մեր մեջքի մեջ քլքլթացող:
Եվ ի՜նչ տղաներ՝ հպարտ ու պայծառ,
որ հայացքով արևն էին շրջանակել,
քեզ հասնելու մեր ինքնության մարտում կյանքը տվեցին:

Հենց առաջին օրն էր՝ մեզ հետ էիր հանրահավաքում,
երբ փոթորկվում էր միասնական մեր ոգին.
կրակի սյունը բարձրանում երկինք
և լույսի տոն էր տիեզերքում,
իսկ լեռներից վեր հորիզոնն էր լայնանում
ճախրանքից Ազատության հրապարակի:

Օդը, ջուրը, կրակն ու հողն էլ,
մինչև իսկ մեր շնչելու իրավունքն էր քեզ համար,

և ամեն բան՝ շահած երազ, սիրած աղջիկ, թե կորցրած սեր,
քո անունն ուներ ու հանուն քեզ էր:
Իմ բառի թռիչքն էլ հյուսվեց
փետուրներին քո հավաքական ճախրանքի.
բանաստեղծի ճակատագրով ինձ էր տրված՝
լինել վկան իմ ընդվզող երկրի անկախության,
և օրհներգեր ներբողել քեզ, ազատություն: